Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

13 հուլիսի 2016թ. ք. Գորիս

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խորհրդի նիստին մասնակցում էին մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տարածքային ներդրումային քաղաքականության վարչության պետ Ա. Բախշյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ Ա. Գիլոյանը :

Օրակարգում՝

1.Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Հովհաննիսյան/

2.Մարզում բերքահավաքի աշխատանքների ընթացքի և աշնանացանի նախապատրաստման մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. 2015-2016 ուսարում մարզի հանրակրթական դպրոցներում կատարված աշխատանքների և նոր ուսումնական տարվա նախապատրաստման մասին:

/Զեկուցող՝ *ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի* կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ.Ալեքսանյան/

4. 2016թ-ի առաջին կիսամյակում մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան/

Մարզի խորհրդի նիստը բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ ,, **Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյանը:

Օրակարգի երկրորդ հարցի՝ ,, **Մարզում բերքահավաքի աշխատանքների ընթացքի և աշնանացանի նախապատրաստման մասին**,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանը:

Օրակարգի երրորդ հարցի՝ ,, ***2015-2016 ուստարում մարզի հանրակրթական դպրոցներում կատարված աշխատանքների և նոր ուսումնական տարվա նախապատրաստման մասին,,*** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյանը:

Օրակարգի չորրորդ հարցի՝ **,,2016թ-ի առաջին կիսամյակում մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին,,** զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով հանդես եկան Տաթևի համայնքապետ Մուրադ Սիմոնյանը և Սյունիքի համայնքապետ Սամվել Սարգսյանը:

Հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55